**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ) ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

06.07.2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝ **Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,

ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը

Բացակայում է

ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոյան,

**Գնումների համակարգող՝** ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության Ս և ռազմական տեխնիկայի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Գ. Հակոբյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Հակոբյան)

1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Գ. Հակոբյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ***ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:***

1.3 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 06.07.2018թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի

հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել' «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում' կողմ' 4, դեմ' 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Հակոբյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-12/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում' կողմ' 4 դեմ' 0:*

| | |
|---|---|
| Գնահատող (ԳԱՊ) | Վ. Գասպարյան |
| Գնահատող, | Գ. Ռուստյան |
| Գնահատող | Կ. Պողոսյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող' | Գ. Հակոբյան |